

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

21 Ապրիլ 1990 թ.

## ՎՐԱՍՏԱՆ

1914 թվի «Արարատ» ամսագրի տվյալներով Վրաստամի տարածքում ուժոցել եմք 439 հայկական եկեղեցիները: Այդ եկեղեցիներից չորսն են միայն զործում սկսյալ 1945 թվից: Դրանք են՝ Թբիլիսի Ս. Գևորգ եւ Ս. Էջմիածին եկեղեցիները, Ախալցխալայի Ս. Գր. Լուսավորիչ եւ Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցիները: Մնացյալ եկեղեցիների մի մասը քանդվել է 1937 թվականին, իսկ մյուս մասը տրվել Վրաստամի Հուշարձանների Պահպանության կոմիտեին:

Վերջին երկու տարիներին Վրաստամի Հուշարձանների պահպանության կոմիտեի հսկողության տակ գտնվող հայկական եկեղեցիներից մի քանիսը հանձնվել են Վրաց Պատրիարքարքարանին, որպես զի զործեմ որպես վրացական եկեղեցիները: Տեղի հայ քանակիչներից բազմիցս դիմումներ են մերկայացվել տեղի Խշխանությամբ՝ հայ եկեղեցիների վերադարձման հարցով, սակայն ոչ միայն չեն պատասխանում Օրինական տերերի պահանջին, այլ ըմիակառակը, ինքնազնուխ տօնորինմամբ հայոց եկեղեցիները հանձնում են Վրաց Պատրիարքարքարանին: Այդ եկեղեցիները հետեւյալներն են.

1. Թբիլիսիի մոտ, Թելեբ գյուղի Ս. Գևորգ վանքը: / Կառուցել է Ներսես Աշոտակեցին /:

2. Թբիլիսիի մոտ, Շավարշաղ գյուղի Ս. Գևորգ վանքը: Գտնվում է լեռան բարձության վերաբերյալ:

3. Թբիլիսիի Քառափի Ս. Գևորգ եկեղեցին: Ըստ Իգմ. Խոսելիամինի կառուցել է մի հայ վանական 1600 թվին:

4. Թբիլիսիի Ս. Ստեփանոս Կուսանաց վանքը: Կառուցված Բեկրությանների կողմից 1728 թ.: Այս վանքը Հայոց եկեղեցում վերադարձելու համար հատուկ դիմումնագիրեր էին գրել ու մերկայացնել կրոնից լիազորին եւ մերժեցին: Հասցեն՝ Թբիլիսի, Եմգելսի փող. Ազեզբեզզովի պողոյմ 3:

5. Վերայի բաղամասի հայոց հիմ գերեզմանատան Ս. Խաչ եկեղեցին, քաղ. Թբիլիսի: Եկեղեցին գրավվեց ս/թ ապրիլ ամսի կետերին:

Գրավված եկեղեցիները եմբարկվեցին խիստ ավերվածության.

1/ Քանդել ու իջեցրել են Սրբություն Սրբոց Խորանները:

2/ Քանդել են Մկրտության ավագանները:

3/ Զարդել ու անհետացրել են հայոց բազմաթիվ արձանագրություններ ու խաչքարեր:

4/ Քանդել են եկեղեցիներին կից դամբարանները, գերեզմանները: Պնդումների պատրվակով, գերեզմաններից հանձնվել են մարդկային ոսկորները ի տես ամենքի:

Քաղաքական վիճակը մույթես խառն է: Ազգային նակատը գրավել է Կրոնից լիազորության շեմքը և ցրել պաշտոնյամերից: Սա տեղի ուժեցավ ապրիլի 4-ին:

Կրոնից լիազորությունն էլ իր բաժին մեղքը ունի Աստուծու առաջ: Հայ բնակիչների դիմումները ամտեսեց, մերժեց և հայոց հարյուրավոր եկեղեցիներից մեկն ամզամ չկամուցավ Վերադարձնել հայությամբ: Ախալցիայի Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցին / Օախապես մզկիր /, տասմյակ տարիներ ժողովուրդը խնդրեց փոխանկելու հայոց Ս. Վարդամանց եկեղեցիով: Զկամեցան:

Սրտցաւ Մի Հայ

